

ՄԵԼԿ

Տարեկան գինը 5 րուբլ, կէս տարեկանը 3 րուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Մատթեոսյանի և Արամյանների խանութում:

Օտարադաշտացիք դիմում են ուղղակի
Туф.мисс. Редакция „Мелк“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ա մ և լ ի զ ու ո լ ի:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Միթէ իրաւունք ունէ՞ք.—ն երբէն տեսնու-
թիւն: Մարադադարների ուսու լրագրութիւնը:
Նամակ Մոսկվայից: Նամակ Երևանից: Ներքին
լուրեր: Արտաքին տեսութիւն: Պատե-
րագրական բերից: Նամակ Գերմանիայից: Նամակ
Կ. Պոլսից: Նամակ Երզրումից: Յայտարարու-
թիւններ:

ՄԻԹԷ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԷ՞Ք

Ահա երեսուն տարեց աւելի է, որ մեր
երկրասարդութիւնը բարձրագոյն ուսում
ստանալով, վերադառնում է հայրենիք...

Ի՞նչ է արել նա այդ ժամանակամիջո-
ցում, ի՞նչ նոր կեանք, նոր գաղափարներ,
ի՞նչ նոր հասանք է մտցրել նա հայրենի
շրջանի, մեր ընտանիքի մէջ... ոչինչ:

Հին սերունդի վրա ազդել անհնարին է
և բոլորովին ապարդիւն աշխատանք կը լինէր,
բայց կայ մեր հասարակութեան մէջ մի տարր,
որ թէև անլարգացած է, ունի իր պակասու-
թիւններ, եւթարկված է սահմանափակ, նեղ,
միակողմանի ուղղութեան, որի կեանքի միակ
նպատակը կարծես զուարճութիւնները և նո-
րաձեւութիւններն են,—բայց որ այնու ամե-
նայնիւ այնքան թարմ է, մոմի պէս փափուկ է,
որ հաստատ կամք ունեւորվ կարելի էր նրան
ձուլել ինչ ձեւի մէջ որ կամենաք... Այդ
տարրը մեր օրիորդներն են:

Դա յատուկ է ամեն հասարակութեան
կանանց սեռի նոր սերունդին, օրիորդներին,
նայել երկրասարդների վրա, որոնք քանի մի
տարի հեռացած լինելով իրանց հայրենիքից,
վերադառնում են բարձր ուսում ստանալուց
յետոյ, որպէս մի կատարելատիպի, իդէալի
վրա: Աղջիկը փակված կեանք է վարել ոչ
թէ միայն իր կեանքում չէ դուրս եկել քա-
ղաքից, բայց հազու տանից էլ դուրս եկել
չէ մտել երբէք կեանքի մէջ, չէ ձանաչում
կեանքը... Յանկարծ վերադառնում է մի երի-
տասնուրդ: Պարզ է որ աղջիկը կը նայէ այդ
ուսում աւարտածի, այդ բարձրագոյն ուսում
ստացածի վրա որպէս մի կատարելատիպի
վրա, կը սպասէ նրանից նոր մտքեր, կեանքի
մէջ նոր հասանք, կաշխատէ հետեւել նման-
վել նրան, ոչ թէ միայն նորա մտքերին, հա-
մոզմունքներին, հայեացքներին, բայց և ամեն
շարժմունքներին, կեանքի եղանակներին...

Նա ակամայ, անգիտակցական կերպով ձգ-
տում է երկրասարդին մօտենալ, նրա հետ
կապել անմիջական հասարակական, ընկերա-
կան յարաբերութիւնները:

Անգիտակցաբար սպասում է նա երկու-
սարդից դաստիարակական, կրթողական ներ-
գործութիւն... Եւ ճշմարիտ ուսման աւելի կա-
րող է նա այդ սպասել: Նա այդ չէ կարող
սպասել իր տգէտ, անկիրթ, անուս մօրից,
կամ նախաճշեղեղման հօրից...

Տեսնե՞ք այժմ ի՞նչ բան է, ի՞նչ էակ է
այդ մեր օրիորդների իդէալը...

Երբ որ երկրասարդը գնացել է, հեռացել է
իր հայրենիքից Մոսկվայի կամ Ս. Պետերբուրգի
համալսարանը մտնելու համար, նա անկիրթ,
կոպիտ, անուս էր, նա երբէք ընտանիքում (նոյն
ընտանիքն է որտեղից է և մեր օրիորդը) չէ
վայելել չէ ստացել օրինաւոր բարոյական դաս-
տիարակութիւն: Նա այնքան ոյժ, ինքնուրոյն
բնաւորութիւն չէ ստացել որ մոռանայ ընդու-
նած թերի դաստիարակութիւնը ու նորից
ինքն իրան դաստիարակի: Նա անցել է չորս

հինգ տարի պանդոխտութեան, նեղ, սահմանա-
փակ ուսանողական ընկերութեան մէջ ամ-
բողջ օրերը թղթախաղին նուիրելով, երբէք
չէ կարդացել ոչ թէ միայն գիտական, կամ
ընդհանուր զարգացողական մի գիրք, բայց և
ամենօրեայ լրագիրն էլ ձեռքը չէ վերցրել
ոչ մի անգամ: Նա չէ յաճախել ոչ մի զար-
գացած օտարազգիների շրջանը, ոչ թէ միայն
չէ սովորել օտար լեզուները, բայց և չէ ու-
սումնասիրել ինչպէս հարկն է, պետական լե-
զուն: Իսկ իր մայրենի լեզուն, եթէ հայրենի-
քում քիչ էլ զիտէր, բոլորը մոռացել է,
արհամարհելով այդ կոպիտ, անիական լե-
զուն:

Նա օրերը անցնում էր թղթախաղի և իր
ընկերների հետ իր հայրենիքից բերած կեղ-
տոտ կիւնտ օյական հանքների մէջ, գի-
շերները մի սիրականի հետ խմելով և զուար-
ձանալով...

Այդ երկրասարդներից ամեն մէկը մի մի
սիրական է ունեցել, նրանցից շատերը հայր են
դարձել... բայց ի՞նչ փոթ... երկխային մկրտել
են և առանց ազգանունի յանձնել են այն հա-
սարակական հիմնարկութիւններից միին, որ
պետութիւնը իր ծախսով պահում է անհա-
րգատ երեխաներին դաստիարակելու համար...
Տարին երբ վերջանում էր, մեր հերոսը թու-
թակի պէս սերտում էր մի քանի դասախո-
սութիւններ և հարցաքննութիւն էր տալիս,
ու այդպիսով դիպում ստանում...

Թող այդ յօդվածը կարդալով այդ թը-
շուառ, իղիօտ հերոսներից ամեն միւր յիշէ
թէ որքան անհարգատ երեխաներ է թո-
ղել նա, թող յիշեն թէ նրանցից իւրաքան-
չեւ մի մի կին են թողել Մոսկվա կամ Պե-
տերբուրգ... մի կին որ գուցէ մի աղքատ, աշ-
խատաւէր կար անող էր, որին մեր հերոսը
ընտելացրել է անգործութեան, որի շնորհով
նա կորցրել է աշխատելու սովորութիւնը և
այժմ անառակ է դարձել...

Եւ այդ այլանշան և դարդակազուրկ երի-
տասարդութիւնը պէտք է ազդեցութիւն ու-
նենայ մեր օրիորդների շրջանի վրա, ինքն
բարոյական ոչինչ հիմունքներ չունեւորվ պէտք
է պատերազմի ծնողը և անբարոյականացնող
հին սերունդի ոյժի դէմ, այդ մասաւորապէս
և ֆիլիկապէս սպառնալից ոյժով իղիօտները
պէտք է ամուսնանան, հայրեր դառնան, ըն-
տանիք դաստիարակեն...

Ի՞նչ պէտք է սովորեն մեր օրիորդները
այդ տեսակ թարմ, գեղեցիկ երկրասարդու-
թեանից, բացի թղթախաղից, բամբասանքնե-
րից, դարձակ զուարճութիւններից և նորա-
ձեւութիւններից սիրելուց, և հաշուող, շահասեր
կեղտոտ վաճառականութեան ոգուց, որի
համար ամենաբարձր իդէալը կեանքի մէջ,
ամենապաշտելին՝ փողն է, որին մեր բարո-
յական բարձր ուսում ստացած երկրասար-
դութիւնը պատրաստ է ամեն բան զոհե-
լու...

Այդ ողորմելի, թշուառ, խղճաւոր ար-
ժանի, երկրասարդական ոգու և դիտու-
թեան կեղծ և փտած ներկայացուցիչ-
ները, տեսնելով որ չեն կարողացան ազդել մեր
հասարակութեան կանանց սեռի թարմ ոյժի
վրա, սխեցին կոպիտ, անվայել կերպով ծաղ-
րել պակասակիլ հասարակութեան այդ
մասը, որի վրա իրանք ոչինչ բարոյական ներ-
գործութիւն չեն կարողացան ունենալ...

Նախ նորա չը դիտեն այն ճշմարտութիւնը
որ եթէ մի նոր միտք, մի վարդապետութիւն

կամենում է ներգործութիւն ունենալ կոծ
վրա, նա պէտք է հեռու պահէ իրան այն
միջոցներից, որ գործ էր դնում հասարակա-
կան կոշտացած, խղճմոռներ կորցրած, փշա-
ցած գասակարգերի վրա ներգործութիւն ու-
նենալու ժամանակ: Կրեթական դասի կամ
անխիղճ հարստահարողների վրա ազդելու
ժամանակ պէտք է մտաւոր կեղծ լինել վրա
ազդելու ժամանակ յարձակողական միջոցները
միայն այն հետեւանքն ունեն, որ կինը դարձ-
նում է ձեղանից իր երեսը, դուք կորցնում էք
նրա համակրութիւնը... Իսկ կանանց վրա
ոչինչ ազդեցութիւն չէ կարելի ունենալ երբ
որ դուք չունէք նրանց համակրութիւնը:

Եւ բացի սորանից ձեր անցեալը իմանա-
լով, արդե՞ք իրաւունք ունէ՞ք յարձակվել
կոպիտ, անվայել կերպով այդ թարմ, դեռ
ոչինչ ուղղութիւն չը ստացած տարրի վրա...

Այդ մեր օրիորդների յանցանքն այն է որ
նորա օպերա աւելի հաւանութիւն են, քան թէ
հայոց թատրոն... օտարազգիների հասարա-
կութիւնը աւելի սիրում են քան թէ այն մեր
նկարագրած գեղեցիկ հայ երկրասարդու-
թեան հասարակութիւնը, նոյա յանցանքն
այն է, որ նորա օտար լեզուին ընտելացած
լինելով, արհամարհում են իրանց մայրենի լե-
զուն... Այդ բոլորը դուք չէ՞ք սովորեցրել
նրանց միթէ...

Իրաւունք ունեն թէ չէ,—այդ թողնենք:
Բայց դուք չէ՞ք, որ հայ ծնված լինելով, ձեր
մայրենի լեզու չը գիտէիք և այժմ էլ չը գի-
տէ՞ք, թէ և գուցէ դաստաւութիւն էք անում,
կամ լրագրի մէջ գրում, լրագիր հրատարա-
կում... դուք չէ՞ք, որ ձեր կեանքում վերցրած
չը լինելով ձեր ձեռքը ոչ մի օտար լեզուի
գիրք կամ լրագիր, յանգնում էք դաստաւու-
թիւն անել գրել լրագիր հրատարակել դաս-
տիարակել ժողովուրդը և այլն, այն ինչ դեռ
1872 թ.ին, երբ մենք դիտաւորութիւն ու-
նէինք լրագրի հրատարակութեանը ձեռք տալ
դուք արդէն բարձր ուսում ստացած,
թարմ երկրասարդներ լինելով, ձեր հաս-
կացողութիւնները մէջ մայրենի լեզուի վե-
րաբերութեամբ ոչինչ չէիք զանազանում
ոչ մի տեղ ուսում չը ստացած մեր օրիորդ-
ներից...

Դուք չէ՞ք որ մօտենալով մեզ խորհուրդ
էիք տալիս թողնել հայոց լրագրի հրա-
տարակութեան դիտաւորութիւնը, անուա-
նելով այդ գործը՝ եթէ ոչ խնդրութիւն:
գոնէ ապարդիւն աշխատանք և ժամանակի
կորուստ, պնդելով որ հայրենիք կորել է, չը
կայ, հայրենի կարգը իմացողները չը կան
հայրենի մէջ, հայոց ազգութիւնը անհետա-
ցիւ է: Դուք չէ՞ք որ տեսնելով թէ մենք
այնու ամենայնիւ շարունակում ենք մեր
գործը, խորհուրդ էիք տալիս մեզ մեր լո-
գիրը գոնէ կիսով չափ հայերէն և ռուսերէն
հրատարակել...

Այդ բոլորը աչքի առչել ունեւորվ այդ
բոլորը կշռելով միթէ իրաւունք ունէ՞ք յար-
ձակվել այն տարրի վրա, որ ձեզանից լաւ է,
մաքուր է, բարձր է, բարոյական է, որ ինքն
ձեզանից ներգործութիւն էր սպասում, բայց
որ ինքներդ ձեր ձեռքից թողնելով, ընդու-
նալով իրեն չունենալով գրաւել նրան,—ե
գրաւել յօգուտ ընդհանուր գործի, ընկե-
րացնել հայ կոծը հայ հասարակութեան
բարոյական վերանորոգութեան և առաջադի-
մութեան գործին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԻ ՌՈՒՍ ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Մեր անցեալ համարներից միում («Մը-
շակ» № 34) մենք յիշեցինք թէ ցանկալի է
որ ուսու լրագրութիւնը եթէ կամենում է
հետեւել մեր տեղական լրագրութեանը, պէտք
է ձարի իր համար լաւ թարգմանիչներ, հա-
յոց և այժմ կաւելացնենք և վրաց լեզուին
տեղական մարդիկ: Սորան մենք կաւելացնենք
որ ցանկալի է նոյնպէս որ մայրաքաղաքների
ուսու լրագրութիւնը աւելի խոր և խորմուս-
ւոր կերպով ուսումնասիրէր մեր երկիրը, կով-
կասը և Անդրկովկասը, որ նորան գրեթէ բո-
լորովին անձանօթ է...

«Моск. Вѣд.» ուսու լրագիրը անդադար խո-
սելով այն բանի վրա թէ Անդրկովկասի թուր-
քերի (թաթարների) մէջ արեւելեան հարցի
յարուցվելուն պէս նշմարելի է լինում մահ-
մետական մոլեռանդութեան աճելը, խիղճ
օգուտ է քաղել մոլեռանդ խօսքից որ
մենք գործածեցինք մեր նկատողութեան մէջ
(«Մշակ» № 31) Ախալքալաքի թուրքերի վե-
րաբերութեամբ և այնքան յափշտակվել է
մեր երկրի մահմետականների իր երեւակայած
գրգռմամբ, որ ուշադրութիւն էլ չէ դարձրել
թուրք խօսքի բուն նշանակութեան վրա...

Պէտք է մի երկրի ձանաչել, նախ քան թէ
կարելի լինէր խօսել, դաստաւութիւն անել
նորա մասին...

Դժբաղդաբար ուսու լրագրութեանը ան-
ձանօթ է մեր երկիրը, նրա դրութիւնը, նրա
մէջ ապրող այլ և այլ ազգերի բարք ու
վարքը, նրանց ոգին...

Մեզ յայտնի չէ թէ արեւելեան հարցի
վերջին անցքերը, թուրքի մէջ պատա-
հած վերջին արեւաշէղ զգուրկ երեւոյթնե-
րը, գրգռած լինէին և մեր անդրկովկասեան մահ-
մետականների մոլեռանդութիւնը և մենք
կասկածում ենք որ «Моск. Вѣд.» և այլ
ուսու լրագիրների այդ մասին արած նկատու-
ղութիւնները ստույգ լինէին: Եթէ մենք գործ-
ածեցինք, կամ թող տեսնեցինք մեր Ախալ-
քալաքի նամակագրին մոլեռանդ թուրք-
քերի բառը գործածելու, այդ մենք արինք
շատ բնական համարելով այդ երկու խօսքի
միաւորութիւնը:

Մահմետական միշտ մոլեռանդ է, այդ
յատուկութիւնը անբաժան է մահմետականու-
թենից: Պէտք է ձանաչել այդ տարրը այդ
ճշմարտութիւնը հաստատելու համար:

Եթէ արեւելեան հարցը և թուրքի մահ-
մետական տարրի մոլեռանդ յուզմունքը քը-
րիտոնեաների դէմ էլ չը լինէր, մահմետա-
կանների բնաւորութիւնը դարձեալ մոլեռանդ
կը լինէր:

Ճշմարիտ է, եթէ ուշադրութեամբ հե-
տեւենք մահմետական աշխարհի այլ և այլ
երկրներին, կը համոզվենք որ քանի հեռու
և խոր ընկած է Ասիայի մէջ մահմետական
ներկայ բնակեցւած երկիրը, քանի սակաւ է
թուով մահմետական ազգաբնակչութիւնը շը-
րջապատող քրիստոնէական տարրը, այնքան
մահմետականներ մոլեռանդ է: Դաւթիժի մահ-
մետականի մէջ, որ վախենում է անձրեւի ժա-
մանակ փողոց դուրս գալ, որ իր շորերը չը
դիպչեն անձրեւից թրծված քրիստոնէայի շո-
րերին, և Գարաբաղի մահմետականի մէջ, որ
ապրելով երկար ժամանակ թուով գերազանց
հայոց տարրի մէջ, ընդունել է հայի բարք
ու վարքը, նրա սովորութիւնները,— մեծ
տարբերութիւն կայ: Պարսկաստանի կամ
Թուրքիայի մոլեռանդ մահմետականի մէջ և
կովկասեան մահմետականի մէջ, որ ապրում է
մի տեղութեան հովանաւորութեան տակ, որ
ձանաչում է մարդկային իրաւունքները և մի-
ջոց է տալիս մասաւոր զարգացմանը հասնե-
լու,— մեծ զանազանութիւն կայ: Բայց այ-
նու ամենայնիւ կան տարբերութիւններ և մեր
կովկասի այլ և այլ մասերում բնակվող թա-
թարների բնաւորութեան մէջ: Ոչ որ չէ
կարող ուրանալ որ թուրքի մահմետականից
զաւառները, որոնք աւելի ուշ են միացած
ուսուսայ պետութեանը, աւելի սուր զարգաց-
ման աստիճանի վրա են գտնվում, քան թէ
կովկասի ներքին նահանգները, որոնք աւելի
վաղ են միացած պետութեան հետ:

«Тифл. Вѣстн.» հաղորդում է որ ԵՐԵՒԱՆԻ նա-
հանգի ժողովրդական ուսումնարանների դերեկտոր
պ. Բ Օ Գ ա չ ռ լ և նրա օգնականը, փոխանակ Երե-

